

# PARLIAMENT MONITORING

## 5-րդ գոխարսան ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԱԺ ՊԱՏԳԱՄԱԿՈՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ 2012-2016 ԹԹ.

### ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ I ԹԵՄԱՏԻԿ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆԴԱՏ» Իրեղեկաբովական հասարակական կազմակերպություն

5-րդ գումարման Ազգային ժողով  
ԱԺ պատգամավորների հայտարարագրեր 2012-2016 թթ.

Չեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N 19182: Չեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

ԵՐԵՎԱՆ 2016

# Նախաբան

«ԱԺ մոնիտորինգ» ծրագիրը 2012 թվականից դիտարկում է 5-րդ գումարման խորհրդարանի աշխատանքը՝ ուշադրության առանցքում պահելով Ազգային ժողովի օրինաստեղծ և վերահսկողական գործառույթների իրացումը, ԱԺ խմբակցությունների ու պատգամավորների գործունեությունը, հանձնաժողովների աշխատանքը, պատգամավորների բացակայություններին ու էթիկայի հարցերին առնչվող խնդիրները: Դիտարկման արդյունքները յուրաքանչյուր նստաշրջանի ավարտից հետո ամփոփվել են զեկույցներով ու ներկայացրել, թե ինչպես է ՀՀ օրենսդիր մարմինն իրացրել Սահմանադրությամբ իրեն վերապահված հիմնական գործառույթները:

2017 թվականին 5-րդ գումարման Ազգային ժողովն ավարտում է իր գործունեությունը: 2017 թ. խորհրդարանական ընտրություններին ընդամառ ծրագիրն ամփոփում է հնգամյա դիտարկման արդյունքներն ու 5-րդ գումարման խորհրդարանի գործունեությունը ներկայացնում՝ ըստ մշտադիտարկման հիմնական ուղղությունների:

**Ներկայացվող զեկույցում ամփոփվել են պատգամավորների գույքի ու եկամուտների հայտարարագրերի դիտարկման արդյունքները:** «ԱԺ մոնիտորինգն» ուսումնասիրել և համեմատել է 2012 թ. և 2016 թ. պատգամավորների ներկայացրած հայտարարագրերում ամփոփված տեղեկությունները: Տվյալները մշակվել են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կայքէջում հրապարակված տեղեկությունների հիման վրա: Դրանք որպես տվյալների բաց բազա ամփոփվել ու ներկայացվել են նաև <http://parliamentmonitoring.am/declaration.html> կայքէջում: Բազայում ամփոփվել են հայտարարագրերի «Տարեկան եկամուտ» և «Դրամական միջոցներ» բաժիններում նշված ցուցանիշները:

Չեկույցում ներկայացվում են պատգամավորների գույքի և եկամուտների հայտարարագրման, շահերի բախման ինստիտուտի օրենսդրական կարգավորման հիմնահարցերը, հայտարարագրերի դիտարկման արդյունքում վերհանված ուշագրավ փաստերն ու միտումները:

Փորձագետներ՝ **Գոռ Աբրահամյան | Բաբկեն Թունյան**

# Պատգամավորների գույքի և եկամուտների հայտարարագրման, շահերի բախման ինստիտուտի հիմնահարցեր Առկա իրավիճակը, օրենսդրական լուծումները

Աժ պատգամավորների գույքի և եկամուտների հայտարարագրումը սկսվել է «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» օրենքի ընդունումից (2006 թ.) հետո: 2011 թ. ինստիտուտի դերը բարձրացնելու և շահերի բախման հետ համակցելու նպատակով Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ միջազգային կազմակերպության՝ GRECO-ի ներկայացրած երաշխավորությունների կատարման շրջանակում ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքը: Դրանով բարձրաստիճան պաշտոնատար անձանց (ԲՊԱ) գույքի և եկամուտների հայտարարագրերի ռեեստրի վարման, հայտարարագրերի վերլուծման և հրապարակման գործառույթները ՀՀ կառավարությունից փոխանցվել են անկախ մարմնին՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին: «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանվում է, որ պատգամավորները՝ որպես բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև նրանց փոխկապակցված անձինք, պաշտոնավարման ընթացքում յուրաքանչյուր տարվա մինչև փետրվարի 15-ը ԲՊԱ էթիկայի հանձնաժողով են ներկայացնում իրենց և փոխկապակցված անձանց գույքի ու եկամուտների հայտարարագրերը:

Օրենսդրության համաձայն՝ դրանցում ամփոփ ներկայացվում է սեփականության իրավունքով նրանց պատկանող անշարժ գույքի (հողամաս, ընդերքի մաս, շենք, շինություն, հողին ամրակայված այլ գույք), շարժական գույքի (ավտոմեքենա, օդային, ջրային փոխադրամիջոց), արժեթղթերի (պարտատոմս, չեկ, մուրհակ, բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին, հարկային տարվա ընթացքում հայտարարատուի կողմից տրված և վերադարձված փոխառություն), 8 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք այլ գույքի և դրամական միջոցների մասին տեղեկատվություն:

Եկամուտների առումով հայտարարագիրը պարունակում են ԲՊԱ-ի, նրա հետ փոխկապակցված անձանց՝ հարկային տարում ստացած եկամուտների և դրանց ստացման աղբյուրների մասին տեղեկություններ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն՝ եկամուտ են համարվում աշխատավարձը կամ դրան հավասարեցված այլ վճարումները, հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը, վարկերը, տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսները, շահաբաժինները, խաղատներում կամ շահումով խաղերում ստացված եկամուտները, նվիրատվության, ժառանգության կամ օգնության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները, ապահովագրական հատուցումները, ձեռնարկատիրական գործունեությունից, գույքի օտարումից ստացված եկամուտները, վարձակալության դիմաց ստացված վճարը, միանվագ վճարները, գույքային իրավունքներից ստացված եկամուտը:

Պատգամավորների հետ փոխկապակցված անձինք են համարվում նրանց ամուսինները կամ կանայք, նրանց հետ համատեղ ապրող ծնողները, ինչպես նաև նրանց հետ համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակները:

Չնայած «Հանրային ծառայության մասին» օրենքի ընդունման հիմնական նպատակներից մեկը գույքի և եկամուտների հայտարարագրման և շահերի բախման հնարավորինս միասնական ու փոխշաղկապված համակարգի ստեղծումն էր, սակայն, պատգամավոր-ների պարագայում այս սկզբունքը որոշակիորեն խախտված է:

Պատգամավորների և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերի լրացումն ու ներկայացումը տեղի է ունենում ԲՊԱ-ների համար սահմանված ընդհանուր կարգով, իսկ շահերի բախման ամբողջական բաղադրիչի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքով: Նման առանձնահատկություն սահմանված է նաև դատավորների, դատախազների և ՍԴ անդամների համար, ինչը պայմանավորվում է օրենսդիր և դատական իշխանությունների ինքնուրույնության, իշխանությունների հակակշռման ու հավասարակշռման սկզբունքով: ԱԺ կանոնակարգ օրենքի 6-րդ հոդվածով, որը վերաբերում է ԱԺ պատգամավորների էթիկայի կանոններին, սահմանվում է, որ իր լիազորություններն իրականացնելիս պատգամավորը չպետք է առաջնորդվի իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով:

Օրենքը պարզաբանում է, որ պատգամավորն իր կամ իր հետ փոխկապակցված անձի շահերով առաջնորդվում է, երբ «ի պաշտոնե գործունեությունն ծավալելիս, թեև գործում է օրենքի սահմաններում, սակայն գիտի, որ դա հանգեցնում է իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրույթյան բարելավմանը»:

Նման դեպքերի համար սահմանվում է կամավորության սկզբունքով շահերի բախման վերաբերյալ իրազեկման կամ հայտարարման ռեժիմ, որի պարագայում տվյալ օրինագծի կամ որոշման քննարկմանը, քվեարկությանը պատգամավորը կարող է չմասնակցել, ինչը անհարգելի չի կարող համարվել:

Պատգամավորների կողմից շահերի բախման սկզբունքի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ԱԺ Էթիկայի հանձնաժողովը:

## ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ 2012-2015


Ինչպիսի՞ն էր պատգամավորների դրամական միջոցների և եկամուտների պատկերը Ազգային ժողովի 5-րդ գումարման սկզբին, ինչպե՞ս է այն փոխվել 4 տարիների ընթացքում, ի՞նչ պատկեր կա գումարման ավարտին: «ԱԺ մոնիտորինգ» ծրագիրն ուսումնասիրել ու համեմատել է 2012 և 2016 թվականներին պատգամավորների ներկայացրած հայտարարագրերը: Տվյալները մշակվել են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողովի կայքէջում հրապարակված տեղեկությունների հիման վրա:

Ամփոփվել են հայտարարագրերի «Տարեկան եկամուտ» և «Դրամական միջոցներ» բաժիններում նշված ցուցանիշները :

<sup>1</sup>Մի շարք պատգամավորներ չեն լրացրել 2012 կամ 2015 թթ. տարեկան հայտարարագրերը (սրանց դեպքում հաշվարկի մեջ հիմք է ընդունվել ցուցանիշի գոյական արժեք)

# Ուշագրավ փաստեր հայտարարագրերի դիտարկումից

- 2015 թ.-ին ԲՀԿ և ՀՀԿ խմբակցությունների դրամական միջոցները միասին կազմել են խորհրդարանի ընդհանուր միջոցների ավելի քան 90%-ը, իսկ միայն Գագիկ Ծառուկյանի դրամական միջոցները ընդհանուրի 1/3-ից ավելին են:
- 2012-2015 թթ. ամենաշատը՝ 2,7 մլն դոլարով, աճել են Աշոտ Արսենյանի դրամական միջոցները: 2012թ. սկզբին նա հայտարարագրել է 1,5 մլն դոլարին, 2015-ի վերջին՝ 4,2 մլն դոլարին համարժեք դրամական միջոցներ:
- 2012-2015 թթ. ամենաշատը՝ 23,1 մլն դոլարով, նվազել են Գագիկ Ծառուկյանի դրամական միջոցները: 2012-ի սկզբին նա հայտարարագրել է 57,5 մլն, 2015-ի վերջին՝ 34,4 մլն դոլար: Ընդ որում, Գագիկ Ծառուկյանի դրամական միջոցների նվազումը արձանագրվել է 2015 թվականի ընթացքում (2015-ի սկզբին նա հայտարարագրել է շուրջ 134 մլն դոլարին համարժեք դրամական միջոցներ):
- Դրամական եկամուտների փոփոխությամբ առաջին տեղում ՀՀԿ խմբակցությունն է, որի պատգամավորները միասին 2015 թ. ստացել են 3 անգամ ավելի շատ եկամուտ, քան 2012-ին (9.5 մլրդ դրամ՝ 3 մլրդ-ի դիմաց):
- 2015 թ. վերջի դրությամբ ԱԺ-ում եղել է 16 դոլարային միլիոնատեր:
- 29 պատգամավոր 2015 թ. վերջի դրությամբ դրամական միջոց չի հայտարարագրել, այդ թվում՝ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը: 5 պատգամավոր 2015 թ. հայտարարագիր ընդհանրապես չի լրացրել (Սպարտակ Մելիքյան, Շուշան Պետրոսյան, Ռուբեն Սադոյան, Վարդան Օսկանյան, Արման Սահակյան):
- ԱԺ պատգամավորների հետ փոխկապակցված անձինք 2015 թ. վերջին միասին հայտարարագրել են շուրջ 13 մլրդ դրամին համարժեք դրամական միջոցներ և 1.9 մլրդ դրամի եկամուտ:



# ԱԺ ՂԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ<sup>2</sup>

## Խորհրդարանի ամենահարուստ պատգամավորները

Ըստ դրամական միջոցների. 2015 թ. վերջի դրությամբ ամենից շատ դրամական միջոցներ հայտարարագրել է Գագիկ Ծառուկյանը՝ 157.8 մլն դրամ, 19.7 մլն դոլար և 13.1 մլն եվրո: Դրամային արտահայտությամբ Ծառուկյանն ընդհանուր առմամբ հայտարարագրել է 16 մլրդ 626 մլն դրամ, դոլարային արտահայտությամբ՝ 34 մլն 369.9 հազ. դոլար: Դրամական միջոցներով երկրորդը Սամվել Ալեքսանյանն է՝ ընդհանուր 4 մլրդ 265.7 մլն դրամ (8.8 մլն դոլար), երրորդը՝ Գրիգորի Մարգարյանը՝ 2 մլրդ 504.2 մլն դրամ (5 մլն 176.7 մլն դոլար):

<sup>2</sup>Ամփոփ տվյալների մեջ արտարժույթով հայտարարագրված գումարները վերահաշվարկվել են դրամով՝ հայտարարագիրը ներկայացնելու շրջաններում (2012-ի տարեսկիզբ և տարեվերջ, 2015 տարեսկիզբ և տարեվերջ) 33 ԿԲ հրապարակած փոխարժեքով:



## Աղյուսակ 1. Դոլարային միլիոնատեր ԱԺ պատգամավորները

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Դրամական միջոցներ			Այդ թվում		
	Դրամային արտահայտությամբ	Դոլարային արտահայտությամբ	դրամով	դոլարով	Եվրոյով	ռուբլով
ԾԱՌՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ ԿՈՆՑԱՅԻ	16 625 977 270,0	34 368 945,3	157 810 000,0	19 717 000,0	13 108 000,0	0,0
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՍՎԵԼ ԼԻՄԻՆԴՐԻ	4 265 572 000,0	8 817 719,9	347 197 000,0	8 100 000,0	0,0	0,0
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ	2 504 256 250,0	5 176 757,1	2 110 000 000,0	815 000,0	0,0	0,0
ՀԱԿՈՔՅԱՆ ՀԱԿՈՔ ԳԱՌՆԻԿԻ	2 446 045 561,3	5 056 424,9	2 060 000 000,0	798 027,0	0,0	0,0
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԹԵՄՈՒՐԻ	2 395 343 750,0	4 951 615,0	1 918 850 000,0	985 000,0	0,0	0,0
ԱՐՍԵՆՅԱՆ ԱԾՈՏ ԵՂԻՇԵԻ	2 035 000 000,0	4 206 718,3	100 000 000,0	4 000 000,0	0,0	0,0
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՀԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ	1 606 297 320,0	3 320 511,3	426 000 000,0	2 300 000,0	128 000,0	0,0
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ ՍԱՍՎԵԼԻ	1 136 665 767,5	2 349 696,7	1 075 843 880,0	125 730,0	0,0	0,0
ԲԱԴԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՀԵՆՐԻԿԻ	1 107 241 350,0	2 288 871,0	300 000 000,0	1 625 000,0	40 000,0	0,0
ԳՈՒԼՈՅԱՆ ՄՈՒՐԱԴ ԱՐԱՄԻ	916 498 500,0	1 894 570,5	215 061 000,0	1 450 000,0	0,0	0,0
ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎՐԵԺ ՎԱՐԱՆՅՈՎԻ	791 643 928,6	1 636 473,2	3 058 000,0	919 464,0	603 937,0	3 700 871,0
ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ ԳԱՐՍԵՆԻ	729 625 000,0	1 508 268,7	4 000 000,0	1 500 000,0	0,0	0,0
ԱՐՍԵՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԲԱԲԿԵՆԻ	690 740 600,7	1 427 887,5	24 525 266,0	1 351 751,0	23 276,0	0,0
ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱ ՀԱՅԿԻ	673 699 000,0	1 392 659,4	55 000 000,0	350 000,0	850 000,0	0,0
ՍԵՂՈՎԿՅԱՆ ՄՅԵՐ ԴԱՎԹԻ	500 000 000,0	1 033 591,7	500 000 000,0	0,0	0,0	0,0
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՍՎԵԼԻ	489 942 450,0	1 012 800,9	27 300 000,0	705 000,0	230 000,0	0,0

**Ընդհանուր առմամբ, 2015թ. վերջի դրությամբ ԱԺ-ում եղել է 16 դոլարային միլիոնատեր:** 29 պատգամավոր 2015 թ. վերջի դրությամբ դրամական միջոց չի հայտարարագրել, այդ թվում՝ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը: 5 պատգամավոր 2015թ. հայտարարագիր ընդհանրապես չի լրացրել:

**Ըստ եկամուտների.** 2015 թ. հայտարարագրած եկամուտներով առաջին տեղում Գագիկ Ծառուկյանն է՝ ընդհանուր առմամբ 6 մլրդ 287.6 մլն դրամ: Ծառուկյանի եկամուտների առաջին աղբյուրը (ըստ մեծության) շահաբաժիններն են՝ շուրջ 3.2 մլրդ դրամ: Շուրջ 2.1 մլրդ դրամ էլ նա ստացել է որպես փոխառությունների դիմաց հատուցում:

Երկրորդ տեղում Աշոտ Արսենյանն է՝ 6 մլրդ 35.7 մլն դրամ: Պատգամավորի եկամտի առյուծի բաժինը՝ 5.9 մլրդ դրամից ավելին, փոխառությունների դիմաց ստացված տոկոսներն են:

Եկամուտներով երրորդ տեղում Գուրգեն Արսենյանն է՝ 1 մլրդ 831.4 մլն դրամ: Արսենյանի եկամտի մեծ մասը շահաբաժիններն են՝ ավելի քան 1.7 մլրդ դրամ:

## Աղյուսակ 2. Ամենաշատ եկամուտ ունեցող պատգամավորները

ԾԱՌՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ ԿՈՆՅԱՅԻ	ԲՅԿ	6 287 638 620,0
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՇՈՏ ԵՂԻՇԵԻ	ՅՅԿ	6 035 697 948,0
ԱՐՍԵՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԲԱԲԿԵՆԻ	ԲՅԿ	1 831 447 675,0
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՍՏԱՆԻՍԼԱԿԻ	ՅՅԿ	1 256 721 710,0
ՍԵՂՈՎԿՅԱՆ ՄՅԵՐ ԴԱՎԹԻ	ՅՅԿ	337 582 800,0
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԹԵՍՈՒՐԻ	ԱՆԿ	252 264 710,0
ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՇՈՏԻ	ՅՅԿ	240 674 258,0
ՆԱԴԴԱԼՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ ՄԻՋԱՅԵԼԻ	ՅՅԿ	226 131 390,0
ՀԱԿՈՒՅԱՆ ՀԱԿՈՒ ԳԱՌՆԻԿԻ	ՅՅԿ	217 261 593,0
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՆՎԵԼ ՍԵԿՏՈՐԻ	ՅՅԿ	157 295 990,0

Ուշագրավ է, որ դրամական միջոցներով երկրորդ տեղը զբաղեցնող Սամվել Ալեքսանյանը 2015 թ. հայտարարագրել է ընդամենը 16.2 մլն դրամի եկամուտ, որից 6.2 մլն դրամը պատգամավորական աշխատավարձն է, 8.8 մլն-ը՝ շահաբաժին:

68 պատգամավոր որպես եկամուտի միակ աղբյուր նշել է աշխատավարձը:


## Որքան ունեն բոլորը միասին

Աժ բոլոր 131 պատգամավորները միասին 2015թ. ավարտին հայտարարագրել են 12 մլրդ 555 մլն 318.9 հազար դրամ, 47 մլն 722.5 հազար դոլար, 15 մլն 310.9 հազար եվրո, 3.7 մլն ռուբլի և 7000 շվեյցարական ֆրանկ (ռուբլով միջոցներ հայտարարագրել է միայն Վրեժ Մարկոսյանը, շվեյցարական ֆրանկով՝ միայն Արա Բաբլոյանը):

Դրամային արտահայտությամբ Աժ բոլոր պատգամավորների տարեվերջին հայտարարագրած ընդհանուր գումարը 43 մլրդ 463.7 մլն դրամ է, դոլարային արտահայտությամբ՝ 89.8 մլն դոլար: 2015 թ. սկզբին Աժ պատգամավորները ունեցել են 48 մլրդ դրամ, 61.5 մլն դոլար, 28.5 մլն եվրո: Տարվա ընթացքում նրանց դրամական միջոցները նվազել են բոլոր արժույթներով:

Ընդհանուր գումարը տարեսկզբին եղել է 93.7 մլրդ դրամ, տարեվերջին նվազել 50 մլրդ դրամին համարժեք գումարով: Նվազման հիմնական «մեղավորը» Գագիկ Ծառուկյանն է, որի դրամական միջոցները նվազել են 47 մլրդ դրամով:

Ընդհանուր առմամբ, 131 պատգամավորներից 53-ի դրամական միջոցները 2015թ. ընթացքում աճել են (ամենաշատը՝ Արայիկ Գրիգորյանինը, 251 մլն դրամով աճ), 43-ինը՝ նվազել, մյուսներինը մնացել են անփոփոխ:




## Ո՞ր արժույթն են նախընտրում պատգամավորները


Պատգամավորների ընդհանուր դրամական միջոցների կեսից ավելին՝ 53%-ը, տարեվերջին, ըստ հայտարարագրերի, պահվել է դոլարով, մինչդեռ տարեսկզբին դրամական միջոցների մեջ գերակշռել է դրամը, ինչը նույնպես պայմանավորված է Գազիկ Ծառուկյանի՝ ՀՀ դրամով միջոցների նվազմամբ:

## Աղյուսակ 4. Ընդհանուր դրամական միջոցները՝ ըստ արժույթի

2015թ.-ի սկիզբ



2015թ.-ի վերջ




## Դրամական միջոցներն՝ ըստ խմբակցությունների

2015 թ. վերջի դրությամբ՝ հայտարարագրած դրամական միջոցների ընդհանուր գումարով առաջին տեղում ԲՀԿ-ն է (եթե ԲՀԿ անդամ դիտարկվենք Նաև Գազիկ Ծառուկյանին): ԲՀԿ պատգամավորները միասին դրամային արտահայտությամբ ունեցել են 25.4 մլրդ դրամ, ՀՀԿ-ն՝ 14.9 մլրդ դրամ, ՀՅԴ-ն՝ 343.6 մլն դրամ, ՕԵԿ-ը՝ 51.5 մլն դրամ, ՀԱԿ-ը՝ 29.7 մլն դրամ, «Ժառանգությունը»՝ 26 մլն դրամ (ընդ որում՝ «Ժառանգություն» կուսակցությունից 2015 թ. վերջին դրամական միջոցներ հայտարարագրել է միայն Թևան Պողոսյանը): Անկախ պատգամավորների ընդհանուր դրամական միջոցները 2015 թ. վերջին կազմել է 2 մլրդ 553.6 մլն դրամ, որից շուրջ 2.4 մլրդ-ը բաժին է ընկնում Արայիկ Գրիգորյանին:

Խմբակցությունների դրամական միջոցները տոկոսային արտահայտությամբ ներկայացված են գծապատկերում

**Աղյուսակ 5. Խմբակցությունների դրամական միջոցները տոկոսային արտահայտությամբ 2015թ. վերջին**



ԲՀԿ և ՀՀԿ խմբակցությունների դրամական միջոցները միասին կազմում են ընդհանուրի ավելի քան 90%-ը, իսկ միայն Գազիկ Ծառուկյանի դրամական միջոցները ընդհանուրի 1/3-ից ավելին են:

## Փոխառություններ.

Աժ պատգամավորները միասին 2015 թ. վերջին ունեցել են 49.8 մլրդ դրամի, 35.9 մլն դոլարի և 25.3 մլն եվրոյի հանձնած փոխառություն (պարտքով տրված կամ բանկում որպես ավանդ ներդրած գումար, որի դիմաց որոշակի տոկոս են ստանում): Դրամային արտահայտությամբ՝ 80.5 մլրդ դրամ: Այս գումարը գրեթե կրկնակի ավելի է, քան 2015 թ. վերջին պատգամավորների հայտարարագրած դրամական միջոցները միասին՝ 43.4 մլրդ դրամ:

## Եկամուտներ.

Աժ 131 պատգամավորների ընդհանուր եկամուտները 2015 թ. ընթացքում կազմել են շուրջ 18.7 մլրդ դրամ: 2012 թ. համեմատ Աժ պատգամավորների տարեկան եկամուտները նկատելիորեն ավելացել են. 2012-ի ընթացքում նրանք հայտարարագրել էին մոտ 13 մլրդ դրամի եկամուտ:

**Եկամուտների աղբյուրները 2015 թվականին.** Աժ պատգամավորների ընդհանուր եկամտի մեծ մասը գոյացել է նրանց կողմից հանձնված փոխառությունների դիմաց ստացված տոկոսներից ու հատուցումներից՝ 8.4 մլրդ դրամ կամ ընդհանուրի մոտ 45%-ը:

Պատգամավորների ընդհանուր եկամտի երկրորդ խոշոր աղբյուրը շահաբաժիններն են՝ 6.3 մլրդ դրամ:

131 պատգամավորները տարվա ընթացքում ստացել են ընդհանուր առմամբ 914 մլն դրամ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, ինչն ավելի քիչ է, քան ընդհանուր եկամուտների 5%-ը:

### Աղյուսակ 6. Եկամուտների աղբյուրները 2015թ.

Եկամտի աղբյուրը	Չափը (դրամ)	Կշիռը (%)
Հանձնած փոխառությունների դիմաց հատուցումներ	8 402 607 286	44,96
Շահաբաժին	6 308 243 221	33,75
Նվիրատվություն	1 312 270 000	7,02
Գույքի օտարում	1 152 709 700	6,17
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	914 341 407	4,89
Այլ եկամուտներ	247 208 955	1,32
Ստացված փոխառություններ	191 163 000	1,02
Վարձակալություն	159 881 488	0,86
Կենսաթոշակ	2 606 692	0,01
<b>Ընդամենը</b>	<b>18 691 031 749</b>	<b>100,0</b>

# Ուշագրավ փաստեր պատգամավորների հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերից

Աժ պատգամավորների փոխկապակցված անձինք 2015 թ. վերջին միասին հայտարարագրել են շուրջ 13 մլրդ դրամին համարժեք դրամական միջոցներ և 1.9 մլրդ դրամի եկամուտ:

Որոշ դեպքերում փոխկապակցված անձինք պատգամավորներից ավելի շատ դրամական միջոցներ են հայտարարագրել, ինչը փոխում է ընդհանուր պատկերը:

Օրինակ, Աժ նախագահ Գալուստ Սահակյանը 2015 թ. վերջին դրամական միջոցներ չի հայտարարագրել, սակայն նրա կինը՝ Ժաննա Աղաբաբյանը, հայտարարագրել է ավելի քան 100 մլն դրամ:

ՀՀԿ-ական մեկ այլ պատգամավոր՝ Արտակ Դավթյանը, հայտարարագրել է ընդամենը 4 մլն դրամ և 4000 դոլար, իսկ նրա կինը՝ 20 մլն դրամ և 100 հազար դոլար: Ավելին, բացի դրամական միջոցներից՝ պատգամավորի կինը հայտարարագրել է 340.4 մլն դրամի և 365 հազար դոլարի հանձնած փոխառություն: Այսինքն, ամուսինների ընդհանուր կարողությունը (միայն դրամական միջոցները) 1 միլիոն դոլարից ավելին է, ինչն արտացոլված չէ պատգամավորի հայտարարագրում: Կամ, օրինակ, ամենահարուստ պատգամավորներից Սամվել Ալեքսանյանը հայտարարագրել է 8.8 մլն դոլարին համարժեք դրամական միջոցներ, իսկ նրա կինը՝ 15.9 մլն դոլար և 9.5 մլրդ դրամի հանձնած փոխառություն:

## Փոփոխությունները 2012-2015թթ.

**Դրամական միջոցների փոփոխություն.** 2012 թ. սկզբին 131 պատգամավորները միասին հայտարարագրել են 123.4 մլն դոլարին համարժեք դրամական միջոցներ: 2015թ. բոլորի ընդհանուր միջոցները կազմել են 89.8 մլն դոլարին համարժեք դրամ, 33,5 մլն դոլարով կամ 27,2%-ով ավելի պակաս, քան 2012-ի սկզբին:




Այս նվազման մեջ որոշակի դեր է ունեցել դրամի արժեզրկումը 2014թ. դեկտեմբերին. դրա հետևանքով պատգամավորների՝ ՀՀ դրամով պահվող դրամական միջոցները դոլարային արտահայտությամբ նվազել են:

Տոկոսային առումով ամենից շատ աճել են ՕԵԿ պատգամավորների դրամական միջոցները՝ 116,2%-ով (49.2 հազար դոլարից հասնելով 106.4 հազարի):

Ամենից շատ՝ 64.9%-ով, նվազել են ՀԱԿ խմբակցության անդամների դրամական միջոցները:

### Աղյուսակ 7. Դրամական միջոցների փոփոխությունը 2012-2015 թթ.



Առանձին պատգամավորների մասով պատկերն այսպիսին է. ամենաշատը՝ 2,7 մլն դոլարով, աճել են Աշոտ Արսենյանի դրամական միջոցները: 2012 թ. սկզբին նա հայտարարագրել է 1,5 մլն դոլարին, 2015-ի վերջին՝ 4,2 մլն դոլարին համարժեք դրամական միջոցներ:

Վրեժ Մարկոսյանի դրամական միջոցներն աճել են 1,6 մլն, Մուրադ Գուլոյանինը՝ 1,18 մլն դոլարով:

Ամենաշատը՝ 23,1 մլն դոլարով, նվազել են Գագիկ Ծառուկյանի դրամական միջոցները: 2012-ի սկզբին նա հայտարարագրել է 57,5 մլն, 2015-ի վերջին՝ 34,4 մլն դոլար: Ընդ որում, Գագիկ Ծառուկյանի դրամական միջոցների նվազումը արձանագրվել է 2015 թվականի ընթացքում (2015 թ. սկզբին նա հայտարարագրել է շուրջ 134 մլն դոլարին համարժեք դրամական միջոցներ):

Վահան Կարապետյանի դրամական միջոցները նվազել են 5,8 մլն, Գուրգեն Արսենյանինը՝ 4,9 մլն դոլարով:

### Աղյուսակ 8. Դրամական միջոցների ամենաշատ աճ և նվազում ունեցած պատգամավորները

ԱՆՈՒՆ ԱՉԳԱՆՈՒՆ	Փոփոխություն	2015թ վերջի դրույթամբ	2012թ սկզբի դրույթամբ
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՇՈՏ ԵՂԻՇԵԻ	2 742 908,9	4 206 718,3	1 463 809,4
ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎՐԵՉ ՎԱՐԱՆՅՈՎԻ	1 636 473,2	1 636 473,2	0,0
ԳՈՒԼՈՅԱՆ ՄՈՒՐԱԴ ԱՐԱՄԻ	1 182 412,0	1 894 570,5	712 158,5
ՍԵՂՐԱՎԿՅԱՆ ՄՅԵՐ ԴԱՎԹԻ	844 546,0	1 033 591,7	189 045,7
ՆՈՒՇԻԿՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԳԱԳԻԿԻ	710 815,6	710 815,6	0,0
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՍԵԿՏՈՐԻ	438 000,1	814 470,9	376 470,8
ԲԱԴԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՅԵՆՐԻԿԻ	369 190,6	2 288 871,0	1 919 680,4

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Փոփոխություն	2015թ վերջի դրությամբ	2012թ սկզբի դրությամբ
ԾԱՌՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ ԿՈՆՑԱՑԻ	-23 130 806,9	34 368 945,3	57 499 752,2
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ	-5 845 092,7	3 320 511,3	9 165 604,0
ԱՐՍԵՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԲԱԲԿԵՆԻ	-4 975 791,8	1 427 887,5	6 403 679,3
ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ ԳԱՐՄԵՆԻ	-3 702 866,9	1 508 268,7	5 211 135,6
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԼԻՄԻՆԴԻԻ	-1 523 046,6	8 817 719,9	10 340 766,5
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ	-1 169 772,1	5 176 757,1	6 346 529,2
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵԼԻԶ ՍԱՐԻԲԵԿԻ	-905 102,8	829 974,2	1 735 077,0

Նկատենք, որ դրամական միջոցների նվազումը անպայմանորեն աղբատացում չի նշանակում: Ծատ դեպքերում, պաշտոնատար անձինք իրենց դրամական միջոցները հանձնում են որպես փոխառություն, վերածում բաժնետոմսերի կամ ներդնում այլ գույքի մեջ: Այսինքն, փոխվում է ունեցվածքի ձևը:

Եկամուտների փոփոխություն.<sup>3</sup> Աժ պատգամավորները միասին 20 15 թ. ընթացքում ստացել են 5.6 մլրդ դրամով ավելի շատ եկամուտ, քան 2012 թ.-ին:

Դրամական եկամուտների փոփոխությամբ առաջին տեղում ՅՅԿ խմբակցությունն է, որի պատգամավորները միասին 20 15թ. ստացել են 3 անգամ ավելի շատ եկամուտ, քան 2012 թ.-ին (9.5 մլրդ դրամ՝ 3 մլրդ-ի դիմաց):

Բացարձակ առումով՝ ամենից շատ նվազել են ԲՅԿ-ի եկամուտները (685.5 մլն դրամ):

<sup>3</sup>Եկամուտների տվյալները դիտարկելիս պետք է հաշվի առնել, որ պատգամավորների ճնշող մեծամասնությունն ընտրվել է 2012թ. մայիսին և պատգամավորական աշխատավարձ սկսել է ստանալ հունիսից:

## Աղյուսակ 10. Աժ խմբակցությունների ընդհանուր եկամուտների փոփոխությունը 2012-2015 թթ.

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ դրամ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ %	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 2015	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 2012
ՀՀԿ	6 554 166 555,0	216,2	9 586 042 414,0	3 031 875 859,0
ՀՅԴ	69 934 401,0	289,8	94 069 812,0	24 135 411,0
ՀԱԿ	27 201 504,0	83,6	59 748 805,0	32 547 301,0
Ժառանգություն	9 915 479,0	53,9	28 299 350,0	18 383 871,0
ՕԵԿ	7 017 041,0	21,6	39 574 562,0	32 557 521,0
Անկախ	-354 663 681,0	-54,4	297 886 739,0	652 550 420,0
ԲՀԿ	-685 507 284,0	-7,4	8 585 430 067,0	9 270 937 351,0

Պատգամավորներից դրամական եկամուտների ամենազգալի աճն ունեցել է ՀՀԿ խմբակցության անդամ Աշոտ Արսենյանը՝ 5,2 մլրդ դրամի փոփոխություն (2012-ին՝ 850 մլն դրամ, 2015-ին՝ ավելի քան 6 մլրդ դրամ եկամուտ):

ԲՀԿ խմբակցության անդամ Գուրգեն Արսենյանի՝ 2015-ի եկամուտները 1,3 մլրդ դրամով գերազանցել են 2012-ի ցուցանիշը: ՀՀԿ-ական Արկադի Համբարձումյանը նույնպես եկամուտների զգալի աճ է ունեցել՝ 1,25 մլրդ դրամ: 2015-ին, 2012-ի համեմատ, ամենաչատր՝ 6.28 մլրդ դրամով նվազել են Գագիկ Ծառուկյանի եկամուտները:

**Աղյուսակ 11. Եկամուտների ամենից շատ ան և նվազում ունեցած պատգամավորները 2012-2015 թթ.**

ԱՆՈՒՆ ԱՉԳԱՆՈՒՆ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ դրամ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 2015	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 2012	ԽՄԲ.
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՇՈՏ ԵՂԻՇԵԻ	5 185 857 848,0	6 035 697 948,0	849 840 100,0	ՀՀԿ
ԱՐՍԵՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԲԱԲԿԵՆԻ	1 332 013 272,0	1 831 447 675,0	499 434 403,0	ԲՀԿ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՍՏԱՆԻՍԼԱՎԻ	1 249 597 560,0	1 256 721 710,0	7 124 150,0	ՀՀԿ
ՍԵՂՐԱԿՅԱՆ ՄՅԵՐ ԴԱՎԹԻ	335 434 320,0	337 582 800,0	2 148 480,0	ՀՀԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ ԳԱՌՆԻԿԻ	178 651 443,0	217 261 593,0	38 610 150,0	ՀՀԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՍԵԿՏՈՐԻ	157 295 990,0	157 295 990,0	0,0	ՀՀԿ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ ԱՇՈՏԻ	152 917 738,0	240 674 258,0	87 756 520,0	ՀՀԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՐՍԵՆԻ	106 128 000,0	108 076 180,0	1 948 180,0	ՀՀԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱՆՏ ՍԵՐՈՒԺԱՆԻ	53 856 170,0	56 980 320,0	3 124 150,0	ՀՀԿ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ ՄԱԿԱՐԻ	53 832 240,0	56 956 390,0	3 124 150,0	ՀՀԿ

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ դրամ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 2015	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 2012	ԽՄԲ.
ԾԱՌՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ ԿՈՆՅԱՅԻ	-2 046 869 068,0	6 287 638 620,0	8 334 507 688,0	ԲՅԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ ՍԱՍՎԵԼԻ	-511 794 763,0	51 447 540,0	563 242 303,0	ԳՅԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԹԵՍՈՒՐԻ	-365 220 590,0	252 264 710,0	617 485 300,0	ԱՆԿ
ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎՐԵԺ ՎԱՐԱՆՅՈՎԻ	-177 076 620,0	6 858 310,0	183 934 930,0	ԳՅԿ
ՆԱՂԱՆՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ ՄԻՋԱՅԵԼԻ	-148 952 290,0	226 131 390,0	375 083 680,0	ԳՅԿ
ԱՂԱԲԱԲՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ	-140 887 350,0	7 936 800,0	148 824 150,0	ԳՅԿ
ԲԱՂԱՆՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ	-134 478 210,0	6 855 940,0	141 334 150,0	ԳՅԿ
ՍԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ	-67 544 270,0	43 804 100,0	111 348 370,0	ԲՅԿ
ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱ ՀԱՅԿԻ	-37 819 680,0	6 980 320,0	44 800 000,0	ԲՅԿ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ	-28 062 860,0	6 980 320,0	35 043 180,0	ԲՅԿ



## Թերի լրացված հայտարարագրեր

Մի շարք պատգամավորներ չեն լրացրել 2012 կամ 2015 թթ. տարեկան հայտարարագրերը (սրանց դեպքում հաշվարկի մեջ հիմք է ընդունվել ցուցանիշի զրոյական արժեք):

2012 թ.-ին հայտարարագիր չի ներկայացրել 13 պատգամավոր, սրանցից 10-ը՝ օբյեկտիվորեն, բանի որ պատգամավոր է դարձել ավելի ուշ: 3-ը պետք է ներկայացնեին, բայց չեն ներկայացրել՝ Շուշան Պետրոսյան, Ռուբեն Սադոյան, Հովհաննես Սոֆոյան:

Ուշագրավ է, որ Շուշան Պետրոսյանը և Ռուբեն Սադոյանը հայտարարագրեր չեն ներկայացրել հաջորդած բոլոր տարիներին, այդ թվում՝ դիտարկված 2015թ.-ին:

Ընդհանուր առմամբ՝ 2015թ.-ին հայտարարագիր չի ներկայացրել 6 պատգամավոր՝ Կարեն Շախմուրադյան (ընտրվել է ավելի ուշ), Սպարտակ Մելիքյան, Շուշան Պետրոսյան, Ռուբեն Սադոյան, Վարդան Օսկանյան, Արման Սահակյան:

	2012թ. տարեկան հայտարարագիր	2015թ. տարեկան հայտարարագիր
ՄԵԼԻՔՅԱՆ ԳԱԳԻԿ ՎԱԴԻՆԱԿԻ	-	+
ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱԶԳԵՆ ՂՈՒԿԱՍԻ	-	+
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈՒՃԱՅԻ	-	+
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՌՈՒԲԵՐՏԻ	-	+
ՇԱԽՄՈՒՐԱԴՅԱՆ ԿԱՐԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ	-	-
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԼԵՈՆԻԿ ՌԱՖԻԿԻ	-	+
ՍՈՖՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐՅՈՒՃԱՅԻ	-	+
ՄԵԼԻՔՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ ՍԵՅՐԱՆԻ	+	-
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՇՈՒՇԱՆ ՍԱՄՎԵԼԻ	-	-
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐՄԱՆ ՍՈՍԻ	-	-
ՍԱԴՂՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱԼՖՐԵԴԻ	-	-
ՕՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՄԻՆԱՍԻ	+	-
ԲԵՔԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿԻ	-	+
ԴՈՒՈՒՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԱՐՏՈՒՆԻ	-	+
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀՐԱՍ ՊԱՏՎԱԿԱՆԻ	-	+

## Առկա խնդիրները

Չնայած վերջին տարիներին հայտարարագրերի նկատմամբ մամուլի, հասարակական կառույցների ուշադրությանը, առկա են լրջագույն խնդիրներ, որոնք հնարավորություն չեն տալիս ինչպես հայտարարագրերը, այնպես էլ շահերի բախումը դարձնել հակակոռուպցիոն լուրջ գործիք, ապօրինի հարստացումը կանխարգելելու և հայտնաբերելու կարևոր միջոց: Աժ պատգամավորների մասով հրատապ են հետևյալ հիմնահարցերը:

- «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի առաջին կետով նշվում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձինք ԲՊԱ Էթիկայի հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի և եկամուտների հայտարարագրերը: Դրանց ներկայացումն, ըստ օրենսդրության, ոչ թե բարձրաստիճան պաշտոնատար անձանց պարտավորությունն է, այլ՝ գործառույթներից մեկը: Աժ կանոնակարգ օրենքի 6-րդ հոդվածը ևս գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելը չի սահմանում որպես Աժ պատգամավորի պարտականություն՝ գործառույթը թողնելով բարի կամքի դրսևորման դաշտում:
- Ոչ «Հանրային ծառայության մասին» օրենքը, ոչ Աժ կանոնակարգը գույքի և եկամուտների հայտարարագրեր չներկայացնելու, դրա ժամկետները խախտելու, հայտարարագրվող տվյալները ոչ պատշաճ ներկայացնելու համար պատասխանատվություն չեն սահմանում: Այսինքն, հայտարարագրեր չներկայացնելը պատգամավորների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար որևէ իրավական հետևանք չի առաջացնում:
- Ոչ ԲՊԱ Էթիկայի հանձնաժողովը, ոչ Աժ Էթիկայի հանձնաժողովը չունեն հայտարարագրերի չներկայացման հիմքով վարույթ հարուցելու իրավական որևէ լծակ՝ անգամ դա պատգամավորների կողմից իբրև Էթիկայի կանոնների խախտում որակելու համար: Աժ 13 պատգամավոր 2012-ից 2015թթ. չեն պահպանել յուրաքանչյուր տարի հայտարարագիր ներկայացնելու օրենսդրական պահանջը (մի մասը օբյեկտիվորեն, քանի որ պատգամավոր է դարձել լրացուցիչ ընտրությունների արդյունքում): Ընդ որում՝ առանձին պատգամավորներ հայտարարագիր չեն ներկայացրել բոլոր 4 տարիներին:



- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանվում է, որ հանրային ծառայողը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում և կարգով ներկայացնել նաև շահերի հայտարարագիր: Նման հայտարարագիրը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում պարզել, թե կոնկրետ իրավիճակում հանրային ծառայողի գործողությունը, որոշումը, վարքը որքանով է բխում իր կամ իրեն փոխկապակցված անձանց մասնավոր շահերից: Հանրային ծառայողների կողմից շահերի հայտարարագրման ուղղությամբ այս ընթացքում ոչինչ չի արվել և այս ենթահամակարգը փաստացի չի գործում:
- Պատգամավորների դեպքում սահմանվում է շահերի բախման մասին իրազեկման կամ դրա անհրաժեշտությունը պարզելու համար ԱԺ Էթիկայի հանձնաժողովի եզրակացություն ստանալու պարտավորություն: Իրազեկումը թողնված է պատգամավորի հայեցողությանը: Այսինքն՝ չկա այլ աղբյուրներից պատգամավորի շահերի շրջանակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավական մեխանիզմ: Պատահական չէ, որ 5-րդ գումարման ԱԺ գործունեության 5 տարիներին ԱԺ Էթիկայի հանձնաժողովը շահերի բախմանը վերաբերող ընդամենը մեկ հարց է քննության առել: Խոսքը Նիկոլ Փաշինյանի՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագրական խորհուրդը ղեկավարելու առաջարկն ընդունելու մասին դիմումն էր, որի քննությունը, սակայն, հանձնաժողովը կարճել էր: Հանձնաժողովը հիմնավորել էր, որ պատգամավորի ստեղծագործական կամ գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ եզրակացություն կարող է ներկայացել միայն այն դեպքում, երբ այդ աշխատանքը վճարովի է, մինչդեռ թերթի խմբագրական խորհրդում Փաշինյանի աշխատանքը լինելու էր ստեղծագործական և անվճար:
- Սկզբունքորեն շահերի բախում չեն համարվում այն դեպքերը, երբ պատգամավորի կողմից որոշման նախագծի ներկայացումը, ԱԺ-ում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ ներկայացվող առաջարկությունը, ԱԺ լիագումար նիստում, հանձնաժողովներում կամ ենթահանձնաժողովներում նրա ունեցած ելույթները, հնչեցրած հարցերը կամ քվեարկությունը վերաբերում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային ոչ առետրային կազմակերպությունների, հիմնարկների կամ դրանց պաշտոնատար անձանց գործունեությանը, երբ դրանք ունեն համընդհանուր հասարակական կիրառելիություն և վերաբերում են պատգամավորի վարձատրությանը, պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերին կամ արտոնություններին: Հատկապես առաջին երկու դեպքերում դժվար է որոշել՝ որքանով է իր վերոնշյալ գործառույթները պատգամավորն

իրացնում՝ ելնելով իր կամ իրեն փոխկապված անձանց մասնավոր շահերից: Պատահական չէ, որ իրավա-տնտեսական կայացած համակարգեր ունեցող երկրների պառլամենտներում շահերի բախման հետ կապված նմանատիպ խնդիրները մեծամասամբ կարգավորվում են լրբբիստական գործունեությանն առնչվող օրենսդրության շրջանակներում: Այդպիսի օրենք, սակայն, Հայաստանում դեռևս չկա:

- Խնդրահարույց են նաև հայտարարագրերի բովանդակային պահանջների կատարման և դրա նկատմամբ բավարար հսկողական մեխանիզմների հետ կապված իրողությունները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ՀՀ ԱԺ պատգամավորների մեծ մասի եկամտի հիմնական աղբյուրը նրանց կողմից հանձնված փոխառությունների դիմաց ստացված տոկոսներն ու հատուցումներն են, ինչպես նաև շահաբաժինները: Տոկոսային արտահայտությամբ այս երկու կատեգորիաներով պատգամավորների եկամուտը կազմում է ընդհանուրի 78 տոկոսը: Սա վկայում է հայտարարագրերում եկամտի աղբյուրների ներկայացման որքան ստանդարտ, նույնքան էլ արհեստական մոտեցման մասին, քանի որ տպավորություն է ստեղծվում՝ թե ԱԺ պատգամավորների և նրանց հետ փոխկապակցված անձանց մեծամասնությունն զբաղված են հիմնականում փոխառություններ հանձնելով և դրանց դիմաց տոկոսներ կամ հատուցումներ ստանալով: Այս պատկերն ավելի շատ եկամտի իրական աղբյուրները թաքցնելու կասկածներ է հարուցում:
- Չնայած վերոնշյալ կասկածահարույց իրողություններին՝ ոչ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, ոչ էլ որևէ պետական մարմին իրավասություն չունի ստուգելու ներկայացված տվյալների արժանահավատությունը, իսկ այն մեխանիզմները, որոնք կարող է կիրառել էթիկայի հանձնաժողովը՝ հայտարարագրերի ավելի համակարգված վերլուծություն կատարելու, ռիսկային կամ կասկածահարույց տվյալները բացահայտելու և ապօրինի հարստացման փաստեր արձանագրելու համար, լիարժեք չեն: Մասնավորապես, հանձնաժողովին հասանելի չեն պետական այլ մարմինների տեղեկատվական բազաները, որտեղից ստացվող տեղեկանքների հիման վրա հնարավոր է ստուգել հայտարարագրերում ներկայացված տվյալների արժանահավատությունը, միտումնավոր թաքցվող անշարժ կամ շարժական գույքը, ինչպես նաև եկամտի որոշ աղբյուրներ:



